է, որ որպէս սրբութիւն պաշտպանել է հին սրբավայրերի աւերակները իրենց անունով եւ երեւի դեռ 20—30 տար եւս ապրին։ Անի-ջայի բերդը նոյնպէս Ուրթամասխայի շրջանից է, որի մօտ են Ուր-Գուլա եւ Ծաղորա բերդ, ամրոց, գղեակ, տաճար-ների աւերակները։ Արտանուշի շրջանի 47 գեղերից եւ այդքան էլ աւերակներից (բերդ, ամրոց, գղեակ, տաճար եւն), անչափ անտառների, լեռների, կածանների, ժայռերի, ճահիճ-լճակների անուններից հազիւ թէ 10—20 %-ը փոփոխուած է, մնացեալները բոլորն էլ կրում են իրենց պատմական անունները դարեւոր կերպով։ Հետաքրքիր է Օրդից անունը (Թուրքերի կարտի վրայ Օրդիզ), որ կրկնւում է Սպերում, Թորդումում եւ Օլթիում, նոյն ինքն սրանց շրջակայ Կոլայում-Կուրի ակունքում։

Ծորոխի Աւազանի անունների մէջ գործածուած «լ» պահպանած է իր բնական փափուկ լ-ի ձայնը, այն ինչ մեր դպրոցների աշակերտներին «ղ» են սովորեցրել եւ լ-ի փոխարէն ղ- են հնչում. Ուղթի, Կղարջք, Կողա. փոխանակ Ուլթի, Կլարջք, Կոլա։ Պէտք է մի անգամ ընդ միշտ վերացնել ղ-ն (փչաւոր), որ սխալների պատճառ է։ Ազ-գաբնակութիւնը չի արտասանում Ուղթի, Կղարջք. այլ ուղղակի Ուլթի (Օլթի) եւ Կլարջէթ), Կոլա։

Արդանուշի գաւառում մինչեւ սոյն պատերազմի վախճանը կային Ադանուչում